Հավելված N 426
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 639-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) առևտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) առևտրի կարգավորումների բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ (23-32.11-Մ4-5)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի հուշաթերթիկներ մշակման և տեղեկատվական հասանելիության աշխատանքներին,
2. մասնակցում է առևտրի քաղաքականության մշակմանը և դրա դիտանցման հետ կապված աշխատանքներին,
3. մասնակցում է երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարման, ինչպես նաև նշված խոչընդոտների վերացման ուղղությամբ ճանապարհային քարտեզի ձևավորման աշխատանքներին Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
4. իրականացնում է պետական և մունիցիպալ գնումների մասով ազգային ռեեստրի վարման աշխատանքները՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
5. մասնակցում է Հայաստանի համար արտոնյալ կամ բարենպաստ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի առկա խոչընդոտների վերացման, մուտքի հնարավորությունների ընդլայնման և հայրենական ապրանքները արտերկրի հեռանկարային շուկաներում ներկայացնելու միջոցառումների վերաբերյալ

առաջարկությունների մշակմանը,

6. մասնակցում է առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման հետ կապված միջոցառումներին,
7. մասնակցում է թվային առևտրի ներդրման և իրականացման աշխատանքներին՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
8. իրականացնում է էլեկտրոնային առևտրի կիրառման առնչությամբ համապատասխան իրավական ակտերի մշակման և դրանցից բխող միջոցառումները:

Իրավունքները՝

- ստանալ Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի հուշաթերթիկների մշակման և տեղեկատվական հասանելիության աշխատանքների վերաբերյալ շահագրգիռ մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն,
- ստանալ Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից և համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր՝ հիմնավորումներ, կարծիքներ, առաջարկություններ,
- ստանալ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններից և շահագրգիռ կազմակերպություններից իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ,
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն շահագրգիռ մարմիններից ու կազմակերպություններից առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման միջոցառումների, Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առևտրի քաղաքականության մշակման վերաբերյալ,
- մասնակցել միասնական շուկայի ձևավորման աշխատանքներին առնչվող պետական կառավարման մարմինների հետ անցկացվող քննարկումներին՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում:

Պարտականությունները՝

- ներկայացնել առաջարկություններ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված անհրաժեշտ հիմնավորումների, կարծիքների և այլ տեղեկատվության հիման վրա,
- կատարել վերլուծություններ ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման ծավալների մասով,

- կազմել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ առևտրային քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ,
- ուսումնասիրել և վերլուծել համապատասխան շուկաները ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում՝ հայրենական ապրանքների մրցունակության և ներկայացվածության ապահովման հետ կապված,
- ներկայացնել առաջարկություններ երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների վերացման ճանապարհային քարտեզի ձևավորման աշխատանքներին մասնագետներ և փորձագետներ ներգրավելու վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում,
- ներկայացնել առաջարկություններ՝ արտաքին շուկաների ուսումնասիրման և տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,
- ուսումնասիրել ներքին շուկայի գործառնության շրջանակներում փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտման և վերացման հետ կապված աշխատանքները, մասնակցել երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների ռեեստրի վարման աշխատանքներին,
- հավաքագրել և ուսումնասիրել առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի կիրառման աշխատանքներին առնչվող տեղեկատվական նյութերը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
2. Ժամանակի կառավարում

3. Փաստաթղթերի նախապատրաստում
4.Կազմակերպական շրջանակ **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը** Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության մասնագիտական օժանադակության համար: **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները** Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և մասնագիտական օժանդակության շրջանակներում: **4.3. Գործունեության ազդեցությունը** Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում: **4.4. Շփումները և ներկայացուցչությունը** Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ: **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը** Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: